

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ  
ԲԱՑ ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի  
2023 թվականի մայիսի 25-ի N 2 որոշմամբ

Ընթացակարգի ծածկագիրը՝ **ՃԴ-ԲՄԽԾՁԲ-2023/01**

Պատվիրատուն՝ **«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամը**, որը գտնվում է **ք.Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3** հայտարարում է բաց մրցույթ, որն իրականացվում է մեկ փուլով՝ էլեկտրոնային գնումների Armeps ([www.armeps.am](http://www.armeps.am)) համակարգի միջոցով:

Սույն ընթացակարգի արդյունքում ընտրված մասնակցին սահմանված կարգով կառաջարկվի կնքել **Կառավարական 3-րդ փան առաջին և երկրորդ հարկերում «Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամին հարկացված տարածքների վերանորոգման աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների** մատուցման պայմանագիր (այսուհետ՝ պայմանագիր):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի սույն ընթացակարգին մասնակցելու հավասար իրավունք:

Սույն ընթացակարգին մասնակցելու իրավունք չունեցող անձանց, ինչպես նաև մասնակիցներին ներկայացվող պայմանները սահմանված են սույն ընթացակարգի հրավերով:

Ընտրված մասնակիցը որոշվում է ոչ գնային պայմաններով բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Սույն ընթացակարգի նկատմամբ կիրառվում են Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրի դրույթները, եթե գնման գինը գերազանցում է Առևտրի համաշխարհային կազմակերպության պետական գնումների համաձայնագրով սահմանված շեմերը

Էլեկտրոնային ձևով հրավեր տրամադրելու պահանջի դեպքում պատվիրատուն անվճար ապահովում է հրավերի՝ էլեկտրոնային ձևով տրամադրումը դիմումը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվա ընթացքում:

Սույն ընթացակարգին մասնակցության հայտերն անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps ([www.armeps.am](http://www.armeps.am)) համակարգի միջոցով մինչև սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված **15-րդ օրվա ժամը 16:00**-ը: Հայտերը, հայերենից բացի, կարող են ներկայացվել նաև անգլերեն կամ ռուսերեն:

Հայտերի բացումը տեղի կունենա էլեկտրոնային ձևով՝ էլեկտրոնային գնումների Armeps համակարգի միջոցով, սույն հայտարարության հրապարակման օրվանից հաշված **15-րդ օրը ժամը 16:00**-ին:

Սույն ընթացակարգի վերաբերյալ բողոքարկումն իրականացվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքով և ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Հեղինե Բաբաջանյանին**

Հեռախոս՝ **010 54 21 76**

Էլ. Փոստ՝ [procurement@armroad.am](mailto:procurement@armroad.am)

Պատվիրատու՝ **«Ճանապարհային դեպարտամենտ» հիմնադրամ**

**Սույն գնման գործընթացը կազմակերպվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին համապատասխան:**